

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱԳՆԱԳԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ  
ՅԱՏՈՒԿ ՆԻՍՏ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՔԻՆ  
ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԱԽԱՉԵՆՆՈՒԹԵԱՄԸ

Հայաստանի Ազգային ժողովի արտաքին յարաբերությունները յանձնաժողովը որոշած է Լեննային Ղարաքաղի տագնապի լուծման նուիրում յատուկ նիստ մը գումարել Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի մասնակցութեամբ:  
Յանձնաժողովի նախագահ Արմէն Ռուստամեան «Արմինֆօ» լրատու գործակալութեան յայտնած է, թէ «Հայաստանի եւ Արդիւնաւորի մէջ ընտրութիւններէն ետք Լեննային Ղարաքաղի տագնապի լուծման գործընթացը յստակօրէն պիտի աշխուժանայ եւ այս առնչութեամբ անհրաժեշտ է քննարկումներ կատարել դիրքորոշումները եւ գնահատականները ճշդելու նպատակով»: Ան նշած է, թէ քննարկումներուն լոյսին տակ յանձնաժողովը մտադիր է որդեգրել փաստաթուղթ մը, որ պիտի բովանդակէ գնահատականներ համապատասխան նշանակութիւն ունեցող Լեննային Ղարաքաղի տագնապի լուծման գործընթացին մասին:

### ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՅԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻ ՀԵՏ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի շարաքավերջին այցելեց Դամասկոս, ուր ընդունուեցաւ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի կողմէ: Քննարկուած են տեղական ու շրջանային իրադարձութիւնները, նորագոյն պարագանմաներու լոյսին տակ:

### ՊԵՐՐԻ ԽՕՍԲ ԱՌԱԲ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ ԳՈՒՍԱՐՈՒՈՂ ԱՐԱՔ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՍՆԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 44ՐԴ ՎԵՅԱԺՈՂՈՎԻՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրի լիբանանեան խորհրդարանի եւ տեղեկատուական պատուիրակութեամբ մը ուղղուեցաւ Դամասկոս՝ մասնակցելու Արաք Խորհրդարանականներու Համադաշնակցութեան 44րդ վեհաժողովին, որ սկսաւ երէկ:

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի հովանաւորութեամբ գումարուող նիստին ընթացքին քննարկումի առարկայ դարձան Սուրիոյ դէմ իսրայէլեան բռնարարքներն ու անոր դէմ իսրայէլեան սպառնալիքները, ինչպէս նաեւ այսպէս կոչուած Սուրիան հաշուետուութեան կանչելու ամերիկեան Քոնկրէսի օրինագիծը:

Նիստին ընթացքին իօսք առաւ Պրրի, որ շեշտեց, թէ Լիբանան նեցուկ կը կանգնի Սուրիոյ եւ կը վորակցի Միջին Արեւելքի մէջ արդար եւ անբողջական խաղաղութեան: Ան պահանջեց նաեւ գործնականացնել եւ աշխուժացնել արաքական միացեալ պաշտպանութեան համաձայնագիրը:

Պրրի դատապարտեց համադաշնակցութեան կողմէ նախապէս տրուած որոշումները եւ կոչ ուղղեց արաքական պետութիւններուն՝ վերջ տալու Իսրայէլի հետ ամէն տեսակի յարաբերութիւններու:

Պրրի ընդգծեց նաեւ, որ Պէյրութի վեհաժողովը փաստեց, որ եթէ արաքական աշխարհը համախոհութեամբ որոշ վեհաժողովներ կատարէ՝ Իսրայէլ անպայման վերջ պիտի տայ իր սպառնալիքներուն եւ բռնարարքներուն:

Անդրադառնալով Սուրիան հաշուետուութեան կանչելու ամերիկեան օրինագիծին, Պրրի ըսաւ, որ անկախութիւն եւ գերիշխանութիւն ունեցող երկիր մը հաշուետուութեան կանչելը յստակ խախտում է միջազգային օրէնքին:

### ԱՊՐՈՃ - ՊԵՐՐԻ ԸՆԴՈՒՄ

Միւս կողմէ, Պրրի երէկ հանդիպում մը ունեցաւ սուրիացի իր պաշտօնակիցին՝ Մահմուտ Ապրաշի հետ: Քննարկուեցան շրջանային պարագանմաները՝ հետպիտէ սաստկացող սպառնալիքներու եւ ճնշումներու լոյսին տակ:

### ԻՐԱՔԵԱՆ ՏԱԳՆԱԳ ՖԱԼՈՒԺԱՅԻ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒՂՂԱԹԻՌ ՄԸ ՎԱՐ ԱՌՆՈՒԵՑԱԻ ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ. 15 ԶՈՇ, 21 ՎԻՐԱԿՈՐ

Վեց ամիսէ ի վեր «պատագրուած» Իրաքի մէջ գտնուող ամերիկեան ուժերը ցարդ ամէնէն մահացու յարձակումին ենթարկուեցան երէկ ընդդիմութեան կեդրոն նկատուող Ֆալուժայի մէջ, ուր վար առնուեցաւ ամերիկեան ուղղաթիռ մը՝ 15 զոհ եւ 21 վիրաւոր պատճառելով:

Դաշնակից ուժերու պատասխանատուներ հաստատեցին, որ «Ձիւնը» տիպի ուղղաթիռ մը վար առնուած էր «անծանօթ վէճքով» մը, երբ դէպի Պաղտատ կը փոխադրէր խումբ մը զինւորներ, որոնք կը պատրաստուէին Իրաքէն հեռանալու: Ձիւնուրական բանքեր մը ըսաւ, որ զոհերն ու վիրաւորները ամերիկացի զինուորներ են: Ան աւելցուց, որ վե-

### «ՔԱՅԻՏԱ»Ի ՏԱՐՐԵՐ ԻՐԱՔ ԿԸ ԹԱՓԱՆՅԵՆ ՍՈՒՐԻՈՅ ՎՐԱՅՈՎ

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵ ՊՐԵՄԸՐ

Իրաքի մէջ ամերիկացի կառավարիչ Փօլ Պրեմըր երէկ «Սի. Էն. Էն»-էն յայտարարեց, թէ «Քայիտա»-ի տարրերուն մէծ մասը Իրաք կը թափանցէ Սուրիոյ վրայով՝ եմէնեան, սուտանական եւ սէուտական անցադիրներով:

Միւս կողմէ, Պրեմըրի կարծիքով, ոչ մէկ շօշափելի տուեալ կայ, որ Իրաքի մէջ հակամերիկեան վերջին գործողութեանց ետին կը կանգնի Սատամ Հիւսէյն, մինչ ամերիկացի այլ ղեկավարներ կ'ըսեն հակառակը, յատկապէս Մերակոյտին մէջ: Պաշտպանութեան նախարար Ռամսֆելտ սակայն կը մնայ Պրեմըրի համակարծիք:

րող իրաքցի մը ըսաւ, որ տեսած է, թէ «քան» մը բախած է ուղղաթիռին պոչին, որ անմիջապէս կրակ առած է կը ջախջախուի իրաքեան հողերու վրայ: Երէկուան յարձակումը կու գայ փաստելու Ծար.ը՝ էջ 9

### ԻՐԱՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԳԼԽԱԽՈՐ ԲԱՅԱԿԱՆ ԵՂԱԻ... ԽՆԴՐՈՅ ԱՌԱՐԿԱՅ ԻՐԱՔ



Իրաքի սահմանակից երկիրներ եւ Եգիպտոս երէկ Դամասկոսի մէջ հանդիպում մը ունեցան՝ քննարկելու համար պատերազմի մը պարագանման տակ կրած արաքական երկիրին իրավիճակը: Սուրիոյ, Մեյտական Արաքիոյ, Իրանի, Եգիպտոսի, Թուրքիոյ, Յորդանանի եւ Բուէյթի արտաքին գործոց նախարարները քննարկեցին Իրաքի անկայուն ու անապահով իրավիճակին ազդեցութիւնը ամբողջ շրջանին վրայ: Խնդրոյ առարկայ Իրաք մերժեց Դամասկոսի ժողովին մասնակցելու երկու հրաւերներ, որոնք վերջին պահուն ուղարկուած էին: Իրաք մերժեց, որովհետեւ երբ ժողովը կայացնելու ծրագրեր կը յայտարարուէին, Սուրիա իրաւիբեայներու ցանկին վրայ նկատի չէր ունեցած Իրաքը, որուն ամերիկացիներուն կողմէ նշանակուած իշխող խորհուրդին օրինականութեան մասին վերապահութիւններ ունի: Իրաքի արտաքին գործոց նախարար Ծար.ը՝ էջ 10

### ԴՐԱՍԱՆ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԷՆ ԱՐԴԷՆ ԿԸ ԽՕՍՈՒԵՐ ԽԱՏՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Երէկ Վրաստանի մէջ տեղի ունեցան խորհրդարանական ընտրութիւններ, ընտրելու համար երկրի խորհրդարանի 235 հոգինոց կազմը: Չուրախեցաւ արաքի հանրապետի միջոցով քաղաքացիները իրենց որոշումը արտայայտելու 2007 թուականին սկսեալ խորհրդարանի պատգամաւորներու թիւը՝ 150ի նուազեցնելու գծով:



Շեարտնած կը քուէարկէ

Առաւօտեան ժամերէն սկսեալ արդէն իսկ տարբեր ընտրական կեդրոններու մէջ խախտումներու եւ որոշ կեդրոններու բաց չըլլալուն մասին հարցեր ծագեցան:

Քուէարկիչ 102 ընտրական տեղամասերէն առաւօտեան բաց էին միայն 30ը՝ քուէարկութիւններու չգոյութեան պատճառաբանութեամբ: Թիֆլիսի մէջ ընտրողներու ցուցակներուն մէջ անճշտութիւններու պատճառով

ընտրական տեղամասի մը մէջ ընտրութիւններ չեղեալ յայտարարուեցան:

Միւս կողմէ, երկրին նախագահը՝ Էտուարտ Շեարտնածէ երէկ քուէարկեց մայրաքաղաք Թիֆլիսի մէջ եւ յայտարարեց, թէ ընտրական գործընթացը «բարեյաջող» պիտի ընթանայ: Ան նախապէս յայտարարած էր, թէ «Վրաստանը պիտի ապշեցնէ աշխարհը՝ արդար եւ ապա ընտրութիւններու կայացումով»...

Ընդդիմադիր ղեկավար Միխայիլ Սահակաւիճի մէկն էր այն հապարարներէն, որոնք երէկ չկրցան մասնակցիլ քուէարկութեան, ընտրողներու ցուցակներէն իր անուն խորհրդարանը ձեռնով «վերացման» պատճառով:

Օրուան ամբողջ տեւողութեան, ոստիկանութիւնը եւ ներքին ապահովութեան ուժերը պատրաստ վիճակի մէջ դրուած էին՝ հակադէմոն համար ընդդիմադիր ուժերու բողոքի արտայայտութիւններու եւ ցուցերու: Վրաստանի խորհրդարանական ընտրութիւններուն հետեւեցան ԵԱՀԿի մատուրապէս 400 դէտեր:

### ՍԵՐԳԵՅ ՄԻՐՈՆՈՎԻ ԳԼԽԱԽՈՐԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Աշխատանքային այցելութեան մը համար շարաքավերջին Հայաստան կը գտնուէր Ռուսիոյ Դաշնակցային ժողովի դաշնակցային խորհրդի (խորհրդարանի վերին պալատ) նախագահ Սերգէյ Միրոնովի գլխաւորած պատուիրակութիւնը:  
Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արթուր Պաղտասարեանի հետ Սերգէյ Միրոնովի ղոնփակ հանդիպումէն ետք, որուն ընթացքին քննարկուեցան միջպետական յարաբերութիւններու պարագանման առնչուող խնդիրներ, Միրոնով եւ իր գլխաւորած պատուիրակութիւնը տեսակցեցան Ազգային ժողովի նախագահին, փոխ նախագահներուն, խմբակցութիւն Ծար.ը՝ էջ 10

**Շ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԸԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆ**  
**ՋԱԻԱԽՔ**  
**ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ**  
**ՀՐԱՅՐ ԲԱԶԵԻ ԳՈՐԾԵՐՈՒ**  
Բացում՝ այսօր՝ Երկուշաբթի, 3 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, Լ. եւ Ս. Յակոբեան Ազգային Զոյէճի սրահին մէջ:  
Ցուցահանդէսը կը շարունակուի Երեքշաբթի (10:00էն 21:00)  
եւ Գորեքշաբթի (10:00էն 14:00):

**Շ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԸԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆ**  
**ՋԱԻԱԽՔ**  
**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՔ**  
**Բանախօս՝ ԸՆԿ. ԸԱՅԿԱԶՈՒՆ ԱԼԿՐՅԵԱՆ**  
**●Գեղարուեստական յայտագիր**  
Երեքշաբթի, 4 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին,  
«Յ. Տեր Մելքոնեան» սրահին մէջ:

### ՀԻՐԱՆԱՆԻ ՄԷՋ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻՆ

Կ'ԸՍԵ ՀԻՒՍԵՅՆ ՀԻՒՍԵՅՆԻ

Խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի երէկ «Էլ. Պի. Սի.»-էն հարցազրոյցի մը ընթացքին շեշտեց, որ Լիբանանի մէջ կառավարութիւն եւ խորհրդարան գոյութիւն չունին, իսկ դատական իշխանութիւնը կը գտնուի իր ամէնէն վատ վիճակին մէջ:

Հիւսէյնի ըստ, որ խորհրդարանին մէջ 2004ի պետական պիտոճէն քննարկուելու ընթացքին պիտի գտնուին շատ մը երեսփոխաններ, որոնք պիտի քննադատեն կառավարութիւնը, սակայն վերջաւորութեան թեր պիտի քուէարկեն անոր վաւերացման, որովհետեւ չեն կրնար դուրս գալ «որոշ իշխանութեան քանեցուցած ճշումէն»:

Հիւսէյնի աւելցուց նաեւ, որ Լիբանանի մէջ սահմանադրութիւնը նուազագոյն ձեւով իսկ չի գործադրուիր, ոչ ալ կը յարգուի:

### ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԸՆԵԼ, ԵՐՈՒ ԴԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ ՄՕՏ ԸՆՆ «ԱՆՕԹՈՒԹԻՒՆԸ» ՏԱԿԱԻՆ Կ'ԻՇԽԵ

Կ'ԸՍԵ ԺՈՄՊԼԱԹ

Արքուպի եւ Հասպայաի մէջ իր շրջապտոյտէն ետք, Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավարը՝ Երեսփոխան Ուալիտ Ժոնպը-լարը հարց տուաւ, որ ի՞նչ կարելի է ընել եթէ ղեկավարներուն մօտ «հին անօթութիւնը» տակաւին կ'իշխէ: Ժոնպըլարը յիշեց տուաւ արաբական աշխարհին, որ դիմադրութիւնը ամէնէն անհրաժեշտ միջոցառումներէն մէկն է գոյատեւելու:

Հասպայաի մէջ, Ժոնպըլարը ողջունեց հարաւային Լիբանանի ապատարութեան համար զոհուած բոլոր նահատակները, ինչպէս նաեւ լիբանանեան եւ սուրիական բանակները: Ան պահանջեց արաբներէն՝ մերժել Իսրայէլի մէջ վիճակական ծառայութիւնը, որովհետեւ փաստօրէն Իսրայէլ արաբական հող է եւ անկարելի է պայն նկատել Իսրայէլեան:

Միւս կողմէ, Հասպայաի մէջ Հըզպալլայի պատասխանատու շէյխ Նեպիլ Քաուուք ըսաւ, որ դիմադրութիւնը մինչեւ վերջին շունչը պիտի կռուի ապատարելու համար բռնագրաւուած բոլոր հողերը՝ մինչեւ Քֆարշուպա:

Քաուուք մերժեց Իսրայէլի որեւէ երաշխիք տալ շեշտելով, որ դիմադրութեան շնորհիւ լիբանանցի եւ արաբ բոլոր գերիներն ալ ապատ պիտի արձակուին Իսրայէլեան բանտերէն:

### ՖԸՆԵՅՇ ԿԸ ԽԱՐԱԶԱՆԵ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Երեսփոխան Մոհամէտ Ֆընէյշ երէկուան իր յայտարարութիւններուն ընթացքին ըսաւ, որ կառավարութեան անդամներուն միջեւ կատարուած խորհրդակցութիւնները պէտք է ըլլան ընդհանուրին ժգտին եւ ոչ՝ անձնական շահերու ի խնդիր:

Ան ցաւ յայտնեց, որ կառավարութիւնը նման աշխատանքի գործընթաց մը որդեգրած է:

Նշենք, որ Ֆընէյշ նշեալ յայտարարութիւնները կատարեց Սայտայի մէջ, իֆթարի ընթացքին:

### ՄԸՐՀԱՊԻ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՊԻՏՏԵԼԻ ԳԾՈՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ

Նախկին երեսփոխան Թալալ Մըրհապի երէկ շեշտեց, որ տնտեսական տագնապալի այս վիճակին ընթացքին եւ սեղմումներու լոյսին տակ նախընտրելի պիտի ըլլար կառավարութեան կողմէ գէթ 2004ի պետական պիտոճէի նախագիծը վաւերացնել առանց քաղաքական լարուածութեան:

### ՊԱՅՏՈՒՆ ՊԻՏՏՃԷՆ ԵՐԿՐԻՆ ՀԱՐԱԶԱՏ ՀԱՅԵԼԻՆ ԿԸ ՆԿԱՏԻ...

Երեսփոխան Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն երէկ նկատել տուաւ, որ 2004ի պետական պիտոճէի նախագիծը Լիբանանի քաղաքական իրականութեան հայեթին է: Այլ խօսքով, պիտոճէն կ'արտացոլացնէ քաղաքական կեանքի ընթացքին կատարուող միջոցառումներու իրականութիւնը:

Պայտուն հարց տուաւ, որ ինչո՞ւ երիտասարդներու անգործութեան հիմնական պատճառը նաեւ կառավարութեան կողմէ քննարկումի չէ ենթարկուած, նկատի ունենալով, որ կառավարութիւնը արդէն իսկ 127 միլիարդ լ. ոսկի տրամադրած է ընդհանուր պիտոճէին:

### ՔԱՍԻՐ ԿԸ ԸՆՆԱԴԱՏԵ 2004Ի ՊԻՏՏՃԷԻ ՆԱԽԱԳԻԾԸ

«Հաւատարմութիւն Դիմադրութեան» երեսփոխանական պլոքի անդամ Ապտալլա Քասիր երէկ ըսաւ, որ 2004ի պետական պիտոճէի նախագիծը չի համապատասխաներ երկրին դիմագրաւած տնտեսական ծանր վիճակին:

Ան նշեց, որ պիտոճէի նախագիծին մէջ արձանագրուած բացը, ինչպէս նաեւ երկրին ղեկավարներուն կողմէ արմատական լուծումներ չգտնելու իրականութիւնը աւելի եւս կը վատթարացնեն երկիրը տնտեսապէս:

Քասիր այս յայտարարութիւնները կատարեց Սուրի մէջ, իֆթարի ընթացքին: Ան շեշտեց դիմադրութեան իրաւունքը եւ արդարութիւնը՝ տապալելու համար թշնամի Իսրայէլեան լուծը:

**ԱՖՀԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**RENT AND SALE**



- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

**ՅՈՒՑԱՍԱՐԱՐՈՒՄ «ԱՐԻՆ» ՄԵՆԹՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅՇԸԼ, ԱՅՇՏԻ ԶԵՆՔ, Բ. ՅԱՐԿ ԵՄԼ. (01) 242553/7**

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**



Վ. Բ. Ը. Ս. - Վ. Ե. Ը. «ԱԼԵՔ ՍԱՆՈՒԿԵԱՆ» ԿԵՂՈՆ ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲ

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ**

1000ԱՄԵԱԿ

Կը մեկնաբանէ՝

**ԴՈԿՏ. ՓՐՈՑ. ՍԵՆՆԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ**

ՄՐՏԱՆԱԿԱՐԱՋՆՈՒԹԻՒՆ ԲԱՆԱՍԵՆԴԱԿԱՆ ՅՈՐԻՆՈՒՄ ՏՐԴ ՄՐՏԱՆԵՐ

Ուրբաթ, 7 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 7:30ին, «Ալեք Մանուկեան» կեդրոնի համընդհանուր մէջ, Ուսարար:

**ՇՐԱԲԵՐ**

**ՄԱՀԱԶԴ**

Տիրա ժաբ Հաքիմեան  
Տէր եւ տիկին զատախազ Ալլաքի Գուլուստի  
Օրիորդ Վերթին Պալուզաբեան  
Տիրա Զոհրապ Պալուզաբեան  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ եւ հարազատին՝

**ԱՐԵԳՆԱԶ ՀԱԵԻՄԵԱՆԻ (ՏԾԵԱԼ՝ ՊԱԼՊՈՒՉԱԵԱՆ)**

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 2 Նոյեմբեր 2003ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 3 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Էլբեքիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուր կ'ենթանկուցուի մարմինը պիտի փոխադրուի Ֆրանչիսկայի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին քնակարանը՝ Էլբեքիի, Ժեհրաուի, «Մար Լուիս» փողոց, Հաքիմեան շէնք, Երեքշաբթի 4 եւ Զորքաբարի 5 Նոյեմբերին:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԱԶԳԱԿ»ԻՆ**

Վճարելով «Ազգակ»ի տարեկան բաժանորդագինը, մեր ընթերցողները օրաթերթին հետ կը ստանան նաեւ

**ԵՐԿՐ**

Հարաբարերը, ամսական յանդիմաններ  
«Պարիկ-Սպարիկ»ը, «Անահիտ»ը,  
«Նաւասարդ»ն ու «Ազգակ-ամսաթերթ»ը:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԿՐՆԱՔ ՎՃԱՐԵԼ ԱՍՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԸ**

«ԱԶԳԱԿ» օրաթերթ, Շաղկապան կենդան  
Հեռ 01-260115, 01-241274, 01-258526  
Fax : 01-258529  
E-mail : aztag@inco.com.lb  
website : www.aztagdaily.com

**www.aztagdaily.com**

**ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՕԳՈՒԺԸ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ ԲՈՆԱԲԱՐԵՅ ԼԻԲԱՆԱՆԻ ՕԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԸ**

Իսրայէլեան օդուժը յետմիջօրէի ժամը 1:45ին օդային թռիչքներով խախտեց Լիբանանի օդային սահմանը, սկսելով հարաւէն եւ հասնելով մինչեւ հիւսիս՝ Պէյրութի վրայով:

Իսրայէլեան օդուժը թռիչքներու ընթացքին խլացնէ ձայնի պատը:

### ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԿԱՆ ԱՅԼԵԻՍ

Կ'ԸՍԵ ՖԸՐԸԸԼԻ

Խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրվիլի շարքավերջին կատարած իր յայտարարութիւններուն մէջ նշեց, որ Լիբանանի մէջ հաստատութիւններ գոյութիւն չունին այլեւս. հետեւաբար վստահութեան մեծ տագնապ կայ քաղաքացիին եւ պետութեան միջեւ:

Ֆըրվիլի կոչ ուղղեց փոփոխութիւններ կատարելու սահմանադրութեան համաձայն եւ յանգելու որոշ օրինականութեան՝ ընտրութեանց նոր օրէնքներ մշակելու ճամբով:

«Կը կարծեմ, որ արդար եւ հաւասարակշռուած ընտրական կանոնները կամ նոր օրինագիծի մը մշակումը միակ մուտքը պիտի ըլլայ փոփոխութիւններ կատարելու:

**2004Ի ՊԻՏՏԵԻ ԳԾՈՎ**

**ՔԱՐԱՄԵ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎԵՐԱԳՐԵ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐԱ ՊԱՅՔԱՐԻՆ**

Նախկին վարչապետ Օմար Քարամէ երէկուան իր յայտարարութիւններուն մէջ նշեց, որ Լիբանանի մէջ 2004ի պետական պիտոճէի նախագիծին իմաստով շրջան ընող քաղաքական բոլոր լարուածութիւնները իրենց իսկութեան մէջ կը վերագրուին նախագահական յառաջիկայ ընտրապայքարին:

Քարամէ քննադատեց կառավարութեան որդեգրած քաղաքականութիւնը՝ երկրին հարցերը լուծելու իմաստով:

**ԲԱՆՏԱԻՈՐՈՒԹՅՈՒՆ**

**Տեր եւ տիկին Ժոզէֆ եւ Գեղեցիկ Ասատուրեան**

բախտաւորուած են առջինն մանչ գաւակով մը՝

**ՆԱՐԵԿ**

Կիրակի, 2 Նոյեմբեր 2003

**ԲԱՆՏԱԻՈՐՈՒԹՅՈՒՆ**

**Տեր եւ տիկին Հրայր եւ Սոնիկ Թրքեան**

բախտաւորուած են աղջիկ գաւակով մը՝

**ԼԵԱ**

30 Նոյեմբեր 2003  
Շալապ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Ազգային առաջնորդարանը դիմումներ կ'ընդունի դիմադրութեան պաշտօնին համար: Թեկնածուն պարտի լրացնել հետեւեալ պայմանները:

- 1.- Տիրապետ հայերէն եւ արաբերէն լեզուներուն եւ ծանօթ ըլլալ անգլերէնի կամ ֆրանսերէնի:
- 2.- Ունենալ համալսարանական վկայական:
- 3.- Ունենալ համապատասխան աշխատանքի լուրջ փորձառութիւն:

Թեկնածուն կը պահանջուի՝ Ներկայացնել իր կենսագրականը (CV)՝ հետեւեալ հասցէին՝

- Ազգային առաջնորդարան, Պուրճ Լամուտ, Արաքս փողոց
- կամ e-mail azkayin@inco.com.lb
- Fax (01) 258305

**ԴԻԿԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՌՈՒՐԵՆ ԶԱՐԿԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՎ (ԵՐԵՅԻԵ)**

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Էրեքիի Համազգային «Ռուրեն Զարկարեան» մասնաճիւղի հիմնադրութեան Յիսնամեակին առիթով, 2003 թուականի գոյացաւ «Ռուրեն Զարկարեան» ֆոնտը, որմէ պիտի օգտուին Բարսեղ Կանաչեան Երաժշտանոց յաճախող տաղանդաւոր հայ աշակերտներ:

**ԿԱՐՉՈՒԹԻՒՆ**

ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԽԱՐՏՆԵՐ ԱՆԹԼԻԿԱՍ ՀՐԱԽԻՐԵԼՈՎ

«ԴՈՒՔ ԷՔ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՂԸ ՈՒ ՄԵՐ ՀՉՕՐՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՐԸ»

Ուրբաթ, 31 Հոկտեմբեր 2003ի երեկոյեան, հրաւերով ու նախագահութեամբ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսի, հայ համալսարանաւարտներու հաւաք մը տեղի ունեցաւ Անթիլիիասի վեհարանին մէջ, կազմակերպութեամբ Հայ Համալսարանաւարտներու Համախմբումին (Հ. Հ. Հ.): Ներկայ էին Հայկական համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոյ Հայտնոսի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի տնօրէն Երուանդ Փամպուքեան, Լիբանանեան համալսարանի դասախօս դոկտ. Մկրտիչ Մկրտիչեան, համալսարանի դասախօսներ, ուսանողական միութիւններու նախագահներ, ՀԵՀՈՄԿաններ, մեծ թիւով համալսարանաւարտներ եւ համալսարանալիաններ:

Քին դիմաց նման կացութիւն մը ան նկատեց ոչ այնքան նախանձելի, սակայն յոյսով նայեցաւ ապագային, երիտասարդութեան մէջ տեսնելով անոր վառ տեսիլքը: Վեր. դոկտ. Փոյ Հայտնոսեան անդրադարձաւ իր նախնային իրավիճակին, մտահոգութիւն յայտնեց որակի անկման: «Ուսանողին եւ անուսին միջեւ տարբերութիւնները սկսած են նուազիլ: Համալսարանաւարտը արժէք կը ստանայ, երբ անոր միտքն ու հոգին կ'ազնուանան եւ անձը կը դառնայ խոնարհ: Սիւսայն ատեն ուսումը կը ստանայ կշիռ», ըսաւ ան: Արամ Ա. կաթողիկոս հայրական խօսքով իր մտածումները բաժնեց ներկայ համալսարանի դասախօսներուն եւ ընթացաւ ուսանողութեան հետ, շեշտը դնելով մեր հաւաքական կեանքին մէջ անոնց մասնակցութեան վրայ: Յատկապէս Լիբանանի մէջ ազգային պատկանելիութեան ու հաւաքական գործակցութեան կարեւորութիւնը ան նկատեց էական: Անդրադարձաւ իր մարտնչի անփոխարինելի դերին այս կեանքին մէջ, վեհափառը ըսաւ. «Մար-

ըն ուժն է այս աշխարհին: Բայց ի՞նչ արժէք ունի ջուրը երբ չի հոսիր: Մարդը արժէք կը դառնայ երբ արժեւորէ ինքզինքը իր շրջապատի կեանքին մէջ՝ իր Ծար.՝ էջ 9

ԼՍԱԽ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԿՈՉ
Սեկնելով մեր 8 Նոյեմբեր 2002 թուակիր կոչւն, կու գանք վերջիչեցնելու մեր սիրելի հաւատացեալներուն, որոնք տակաւին չեն վերանորոգած Պորժ Համուտի Հայ Կաթողիկէ գերեզմանատան մէջ իրենց դամբարաններուն սեփականագիրը, մինչեւ 20 Ղեկնումներ 2003 ամբողջացնել զայն: Գրեցեալները ժողովրդապետութեան գրասենեակը, ամեն օր, բացի Ուրբաթ եւ Ծաբաթ օրերէն, առաւօտեան ժամը 9:00էն 13:00, հարկաւոր կարգադրութիւնները տեսնելու համար: Վերոյիշեալ թուակցներէ ետք, չվերանորոգուած սեփականագիր մը չեղեալ պիտի նկատուի:
Ս. ՓՐԿԻՉ ԵՎԵՂԵՏԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒԱՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ
8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
8:45.- «Աստղեր»
9:00.- «Ուստիո Թատրոն» կը ներկայացնեն Մարի Ռոզ Մանուկեան եւ Մանուէլ Մարգարեան
9:40.- «Առաւօտեան տոն»
11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
1:30.- Հայաստանեան լուրեր
3:00.- Արաբերէն յայտագիր. հարցազրոյց Միշէլ Մաաիբիի հետ. կ'արժարժէ ցիւթեր տնտեսական դժուարութիւններու եւ մշակութային կեդրոններու տագնապներուն մասին, ինչպէս նաեւ կ'անդրադառնայ լիբանանեան շարժապատկերին եւ մշակութային լրատուութեան մարզի իրավիճակին
4:45.- «Բարի երեկոյ Կանոն Զայնեան» ուղղակի ձայնագրում՝ ալյազան եւ հետաքրքրակից ցիւթեր, երգեր, հարցազրոյց եւ այլն
7:00.- «Վանայ Սփոր» անցնող շաբթուան մարզական լուրերու ներկայացում

السفير
الصحراء
البيروت
الاستقبال
الذخيرة
التحرير

1 Նոյեմբերի լիբանանեան օրաթերթերը գլխաւորաբար լուսարձակի տակ առած են Իրաքի մէջ տեղի ունեցող յարձակումներու սաստկացման մտավախութիւնները, Դամասկոսի կողմէ Իրաքի հարցի արժարժան նպատակով արաբական երկիրներուն ուղղուած ժողովի հրաւերը եւ պաղեստինեան տագնապին լուծման գծով Ռուսիոյ ներկայացուցած առաջարկն ու Ռաշինկոյի հակապաղեստինը: Տեղական լուրերու կարգին 2004ի պետական պիտոմէն եւ անոր լուծման համար Սուրիոյ ներդրումը կը շարունակեն մնալ տիրական լուրերը: «Սուրիոյ» օրաթերթը հարց կու տայ, թէ պետական պիտոմէնի անշուքեամբ ստեղծուած համաձայնութիւնը արդե՞ք պիտի ընդգրկէ այլ թղթածրարներ:
ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՀԱՐՑԻ ԳԾՈՎ ԱՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ
«Տիւրք» գրած է, թէ Շարոնի Մոսկուա հասնելէն քանի մը ժամ առաջ, խաղաղութեան քարտէսին Կոթակոյի ռուսական ծրագիրը մը ներկայացուցաւ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին, մինչ Ռաշինկոյն կը շարունակէ ընդդիմանալ անոր: «Քիֆահ Արապի» համաձայն, Շարոնի կ'որոշէ բանակցի պաղեստինցիներուն հետ, իբրեւ զօրակցութիւն Բորէյի: «Սաֆիր» նշած է, որ ամերիկեան ընդդիմութեան կողմէ անոր հակառակ, ռուսական ծրագիրը կը ներկայացուի ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին, խաղաղութեան ձայնը քարտէսին արդիւնքը կը շարունակէ ընդդիմութեան անոր հակառակ: Ըստ թերթին, Ամերիկայի պաշտպանութեան փոխ նախարարը ըսած է, թէ աշխարհը կարիք ունի խաղաղութեան - պաղեստինեան խաղաղութեան հաստատման: «Լիուս» դիտել տուած է, թէ լուրեր շրջան կ'ընեն Շարոնի եւ Բորէյի միջեւ հանդիպումի մը կայացման մասին, իսկ իսրայէլեան ուժերը կը

պատրիարքը յայտարարեց, որ ինք կը մերժէ սահմանադրութեան փոփոխութիւնը, բացի թէ անկարելի եղաւ օրինական ընտրութիւններ կայացնել եւ կը նշէ, թէ Դամասկոսէն հասած լուրերուն մեծամասնութիւնը հիւսնադրային են: «Տիւրք» համաձայն, նախագահ Լաուրէն Երկրին վերականգնման գործընթացին մէջ շեշտը կը դնէ դրամատուններուն դերակատարութեան վրայ. թերթը գրած է, թէ 2004ի պետական պիտոմէն պիտի ներկայացուի խորհրդարանին, իսկ սուրիական միջամտութիւնը իր դրական ազդեցութիւնը ունեցաւ նաեւ այլ թղթածրարներու լուծման վրայ: «Սաֆիր» նշած է, թէ Սֆէյր պատրիարքը յայտարարած է. «Եթէ մեզի առիթը տրուէր մեր ղեկավարները ընտրելու, մենք երբեք միջնորդութիւն կարիք պիտի չունենայինք»:
ԻՐԱՔԻ ՀԱՐԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԱԿ
«Տիւրք» գրած է, թէ Դամասկոս հրաւերներ ուղղեց Իրաքի արտաքին գործոց նախարարին, իսկ Սեւեական Արաբիա, Քուէյթ եւ Յորդանան սպառնացին չմասնակցիլ Դամասկոսի խորհրդաժողովին. եթէ Իրաք չհրաւիրուի: «Քիֆահ Արապի» դիտել տուած է, թէ մինչ արաբական կարգ մը երկիրներ ճնշում կը բանեցնեն Սուրիոյ վրայ Իրաքը եւս հրաւիրելու Իրաքի հարեւան երկիրներու խորհրդաժողովին, Չեպարիի անունը դրուած է սպառնչութեան ցանկին վրայ, իբրեւ միջին ելը: «Նահար»ի համաձայն, Սուրիա հրաւեր ուղղեց Իրաքի արտաքին գործոց նախարարին եւ կը սպասէ արաբական այլ երկիրներու քայլերուն:
ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԵՒ ՇՐՁԱՆԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ
«Տիւրք»ի համաձայն, Պարատի յայտարարած է, թէ Իրանի կողմէ ներկայացուած կորիզային հարցի թղթածրարը անբողջական է: «Անուար» գրած է, թէ Քոնկրետին մէջ եղած վկայութիւնը մը դիտել տուած է, որ ամերիկեան իշխանութեան կողմէ Սուրիոյ ուղղուած անբաստանութիւնները անհիմն են: Ըստ թերթին, Մահաբի կ'աւարտէ իր առաքելութիւնը իբրեւ ամենէն երկար ժամանակաշրջանը իշխած ղեկավարը Արեւելեան Ասիոյ մէջ: Թերթը նշած է, որ Եվրոպայի կողմէ կ'ընկերակցի Քալիֆորնիոյ կառավարչին եւ կը ծանօթանայ իր դերին պատճառով վնասներուն, որոնք անբողջովին քանդած են շուրջ 2500 բնակարան:

DAY WATER
RECOMMENDED FOR BABIES
Clean & Safe Water
Under Hygienic Condition
NATURAL - PULVERIZED - BOTTLED
Free delivery
19 Litre @ 2000L.L.
Mr. Jim Manouk Keuskenen owner
DAY WATER, Tel.: 03/435298

ST. MARC
MEDICAL & DIAGNOSTIC CENTER
ՈՉ ԳՈՑ «ԳԱԳԱՂ»Ի ՈՉ ԱՆ ՆԵՂ «ԽՈՂՈՎԱԿ»Ի ՄԸ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԻՔԸ ՄՆԱՑ ԱՅՆԵՒՍ. ԱՐԳԻ ԹԵՔՆՈԼՈԳԻԱ
ԳՈՑ MRI ԲՈՒՆԱՐԻՆԵՑ ԲԱՑ MRI
ՎԱՆԱՆԱՈՒ ՊԱՏԱՌ ԶՄԱՅՑ ԲՈԼՈՐ MRI ԵՎԱՐԱՆԱՆՄԱՆ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՆԱԳՆԵՐՈՒՆ. ԵՆՈՐՀԻՐ
ՇՐՁԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՄԻԱԿ ԲԱՅ ՄՐԻ ԻՆ
ՈՐ ՄԵՑ ՅԱՅՈՂՈՒԹԵԱՄ ԿԸ ԵՆՈՐԻՆԱԿԸ ԳՈՐԾԵԼ ՄԵՆ ՄԱՐՔ ԿԵԳՐՈՆԻՆ ՄԵՋ
GE SIGNA PROFILE ULTRA OPEN MRI 15mT/s

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՒ ԱՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ
Հովանաւորութեամբ՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ
Կազմակերպութեամբ՝ ԲԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔԻՆ
Կը դասախօսէ՝ ԴՈԿՏ. ԱՐԻ ԹՕՓՈՒԶԻԱՆԵԱՆ
(Գիտաշխատող Ֆրանսայի Գիտահետազոտական Ազգային Կեդրոնին եւ Երատարակիչ «1700ամեակի Աստուածաշունչ»ին)
Տեղի կ'ունենայ այսօր՝ Երկուշաբթի, 3 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Կիլիկիա» բանգարանի սրահին մէջ, Անթիլիաս:
ՀՐԱԽԻՐ ԲՈԼՈՐԻՆ

galerie PIERROT
Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans
Liste de Naissance et de Bâptême
Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

BALTAYAN ELECTRONIC
Ս. Սահակեան
Պատմական արտադրող
Տեղ. 01/252981





Աշակուրացի Էջ

ԴԱՐ ՄԸ ՀԱՅՐԵՆԻ ԳԵՂԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ

«Պէտք է որ ուրոյն բան մը գոյութիւն ունենայ հայ ժողովուրդի ծիներուն մէջ, որպէսզի անոնք կարենան ծնունդ տալ այսքան լաւ գեղանկարիչներու»:

ՀԷԼԷՆ ԽԱԼ

Իր տեսակին մէջ իւրայատուկ ցուցահանդէս մը կազմակերպած է «Նոս»-ը կազմակերպչական ընդհանուր խորագիրին տակ: Յուշահանդէսին բացումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 7 Նոյեմբերի երեկոյեան ժամը 7:00ին, Լիբանանի լրագրողներու սենտիքայի նախագահ Մըլհէմ Քարամի հովանաւորութեամբ:



«Ամպեր Սեւանի վրայ», գործ՝ Մարտիրոս Սարեանի

հանրային, եւ այն: Երեսունական թու-

թուականներու ծնունդներն են, ինչպէս՝ Ռոպէրթ իլիթէկեան, Անատոլի Գրիգորեան, Սամուէլ Պետրոսեան, Արա Շիրազ, Էմմա Գրիգորեան, Մկրտիչ Մազմանեան, Վիգէն Թադէոսեան, Վարուժան Վարդաշենյան:

Բացի յիշեալներէն, ներկայացուած են նաեւ ժամանակակից խումբ մը երիտասարդներ, որոնց արձանները թէեւ քաներորդ դարուն մէջ միանում են, սակայն անոնք ի վերջոյ կ'անցնին քանսմէկերորդ դար ու ապագային կ'ընդհանուրանան սկիզբի հայրենի գեղանկարչութիւնը, ինչպէս՝ Յարութիւն Յակոբեան, Վահրամ Դաւիթեան, Սամուէլ Գարեգինեան, Տիգրան Մատուշեան, Դարուժան Մատուշեան, Դարուժան Մատուշեան, Գրիգորեան, Միսաք Սեւոյեան, Արա Միքայէլեան եւ այլն:

Ռոպէրթը, թէեւ ամրոջականորէն ներկայացուցած չենք ըլլալ հայրենի գեղանկարչութիւնը (կան կարգ մը պակասաւոր կարեւոր, անուններ, ինչպէս՝ Ալ. Բաթրեւէ, Մեդիքեան, Յակոբ Կոյոյեան, Գր. Ունլեան, եւ այլն) սակայն ցուցադրութեան դրուած հարիւր ստեղծագործութիւնները ոչ միայն ընդհանուր գաղափար մը կու տան մեզի հայրենի գեղանկարչութեան մասին, այլեւ լիարժէք գաղափար կրնանք կազմել, հայրենի գեղանկարչութեան մէջ գարեջուրը անցած ուղիներուն եւ ձգտումներուն մասին:

Կազմակերպիչները (օգտագործուած են լիբանանահայ հինգ հաւաքածոներ) առեւտրական ակնկալութիւններ չունին այս ձեռնարկին: Ոչ Լիբանանի տնտեսական կացութիւնը կը նպաստէ այս ձեռնարկի տնտեսական չափանիշներուն, եւ ոչ իրենց արուեստի գործերու տէրերը տրամադիր են վաճառելու անոնց կարեւոր մէկ մասը:

Այս իսկ պատճառով գաղութիւն արուեստագետ Նասարակութիւնն ու մասնաճիւղ ուսանողութիւնն ու աշակերտները կը հրահրուեն այցելելու Ջալթայի «Նոս»-ը ցուցադրած, ուր իրենց պիտի տրուին նաեւ համապատասխան բացատրութիւններ հայրենի գեղանկարչութեան պատմութեան եւ անցած ուղիներուն մասին:

Ուրբաթի զաւրեակ պարագային կը խնդրուի ի սկզբանէ տեղեկացնել: Այս իսկ պատճառով գաղութիւն արուեստագետ Նասարակութիւնն ու մասնաճիւղ ուսանողութիւնն ու աշակերտները կը հրահրուեն այցելելու Ջալթայի «Նոս»-ը ցուցադրած, ուր իրենց պիտի տրուին նաեւ համապատասխան բացատրութիւններ հայրենի գեղանկարչութեան պատմութեան եւ անցած ուղիներուն մասին:

ՍՈՒՎԵՆ ԾԻՐԱՆԻ

«ՍԻՐՈՒՄ ԵՄ ՆԿԱՐԵԼ ՈՒ ՆԿԱՐՆԵՐՈՎ ՄԱՐԳԿԱՆՅ ԿՈՂՔԻՆ ԼԻՆԵԼ»

Արուեստը կամ արուեստագետը անջատել քաղաքականութենէն այնքան ալ դիւրին չէ: Զաղաքականութիւնը ի սկզբանէ փորձած է օգտուիլ արուեստին եւ արուեստագետի ժողովրդականութենէն: Առայժմ, հետաքրքրական են հայրենի լաւագոյն գեղանկարիչներէն՝ Յակոբ Յակոբեանը կարծիքներն ու տեսութիւնները, արուեստի եւ քաղաքականութեան փոխյարաբերութիւններուն մասին:



ՀԱՐՑՈՒՄ.- Ի՞նչպէս կը բնորոշք արուեստագետ-քաղաքականութիւնը կապը դուք, որ լինելով արուեստագետ, անկեղծ ու շիտակ մասնակցում էք քաղաքական կեանքին ձեր յոգուածներով ու հարցադրոյցներով: Ի՞նչն է ձեր գրաւումը ու ի՞նչն է վաճառում արուեստագետ-քաղաքականութիւնը փոխյարաբերութեան մէջ:

ՊՏԱՍԽԱՆ.- Նախ՝ իբրեւ հայ մարդ, չեմ կարող անտարբեր լինել իմ ժողովրդի վիճակին, իմ ժողովրդի պատմութեան, այդ պատճառով էլ երբեմն-երբեմն յոգուածներ եմ գրում՝ այդքանն է մասնակցութիւնն քաղաքականութեանը: Ես ոչ թէ քաղաքականութեանն եմ մասնակցում, այլ պարզապէս ուզում եմ իմանալ ի՞նչ է կատարուում իմ երկրում: Եթէ մենք չիմանանք մեր ժողովրդի պատմութիւնը, չիմանանք ի՞նչ է կատարուում այսօր, ի՞նչ վիճակում է ժողովուրդը, ի՞նչպէս պիտի ապրենք:

Դժբախտաբար պէտք եղած տեղեկութիւնները չեն մատուցում ժողովուրդին, մարդիկ իրապէս չեն իմանում ինչ վիճակում են ապրում: Ահաւասիկ՝ խոսում են մարդահամարի մասին, բայց մենք չենք իմանում իրապէս քանի՞ հոգի են այսօր այս հողի վրայ ապրում, այդ բնակչութեան ո՞ր տոկոսն է ծեր, ո՞ր տոկոսը՝ երիտասարդ, ո՞ր տոկոսը գարգացած է, ո՞ր տոկոսը հարուստ է, ո՞ր տոկոսը աղքատ է... Չենք իմանում այս բոլորը:


Մենք պարզ տեսնում ենք, որ երկիրը արհնաքամ է լինում՝ ժողովուրդը թողնում է իր երկիրը ու հեռանում է: Ի՞նչ չափ են հեռացել, ո՞ր էր են գնացել... Իբրեւ իմ երկրում ապրող քաղաքացի (մասնաւոր՝ քաղաքացի, քանի որ 12 տարի արդէն անկախ պետութիւն ունենք), որ արդէն նոր որպէս իմանալ իր պետութեան վերականգնումով՝ համեմատած հայրենի նախկին վիճակին, ինչ հետաքրքիր է իմ ժողովրդի կեանքը: Ոչ իբրեւ արուեստագետ էս, այլ՝ քաղաքացի: Իմ արուեստը յատուկ բնագաւառ է եւ անպայման ու բացայայտ չի ազդում քաղաքականութեան ու վարչակարգի վրայ: Ես ապրել եմ տարբեր վարչակարգերում ու միշտ նկարել եմ՝ Եգիպտոսում, խորհրդային իշխանութեան օրօք, հիմա...

Հիմնականը, աշխարհահայեացքս, արուեստի մասին պատկերացումներս չեն փոխուել: Իբրեւ արուեստագետ ինձ համարում եմ անհատականութիւն, մարդ, որ անում է իր գործը ու դա իր առանձնյայտութիւնը՝ ես սիրում եմ նկարչութիւնը ու նկարում եմ իմ նկարները: Ինչ էլ պատահի, պիտի միշտ նկարելու նախընտրէի: Լաւագոյն դէպքում՝ նկարչութեան շնորհիւ գոյութիւնս պաշտպանելը: Այնպէս որ ուղղակի կերպով քաղաքականութեան հետ կապ չունեմ, բայց քաղաքականութեան հետ ամէն հայ մարդու կապով եմ կապուած, ամէն քաղաքացու կապով, որ պարտաւոր է հետեւել ու մասնակցել իր երկրի կեանքին:

Դժբախտաբար այս տասը տարիների ընթացքում երկրի վիճակն այնպիսին է, որ չեմ հասկանում ինչ է կատարուում: Պարզ ահեմ՝ մտքի մէջ կատարելիք կայ ու ես յստակ չեմ հասկանում ի՞նչ է իմ տարբերը երկրում, մեր պետութիւնն ի՞նչ վիճակում է, ո՞ր է գնում, ի՞նչ հեռանկարներ կան ժողովրդի համար: Բայց ապրում եմ, տեսնում եմ, տեսածիս շուրջ մտքերս եմ կիսում...:

Հ.- Ընտրութիւնից ընտրութիւն հասարակութիւնը քաղաքականացնում է եւ քաղաքականութեան շրջագրւում են ներառում մտաւորականները՝ ունենալով տարբեր դիրքորոշումներ: Սովորաբար համարում էք, որ արուեստագետը ընդդիմութիւն է իշխանութեանը, արդե՞ք այդպէս է եւ արդե՞ք այսօր կայ արուեստագետ-իշխանութիւն-ժողովուրդ եռանկյունի:

Պ.- Ես չեմ համարում, որ արուեստագետը ընդդիմութեան մէջ է պետութեան հետ: Մենք պատմութեան ընթացքում, եթէ արուեստի մասին ենք խօսում ընդհանրապէս, ամենահին ժամանակներից, պիտի յիշենք, որ անցեալի բոլոր քաղաքակրթութիւնների ժամանակ արուեստագետները մեծ գործունէութիւն են ունեցել: Հին Եգիպտոսի արուեստը տեսէ՞ք՝ ամբողջ Եգիպտոսի ժողովրդի ստեղծագործութիւնն է: Եւ եթէ արուեստագետն իր ամբողջ կեանքն ընդդիմադիր գոյութեան մէջ լինէր, արուեստ չի գալիս իբրեւ ընդդիմութիւն պետութեան դէմ, արուեստագետն է միայն ընդդիմադիր է հասարակութեան մէջ տիրող կաշկանդիչ հանգամանքներին: Արուեստագետի համար լաւագոյն պայմանը անկաշկանդ լինելն է, իսկ եթէ պետութիւնը կարող է արուեստագետին կաշկանդել, ուրեմն պետութիւնը ամենամեծ վնաս է տալիս ոչ միայն արուեստագետին, այլեւ՝ իր երկրին, իր քաղաքացուն: Կայ նաեւ կաշկանդելու ուրիշ վիճակ՝ հասարակութիւնն սպառնալով որոշ պարագայում իր ճաշակի, իր մտայնութեան մէջ չի սիրում փոփոխութիւն, իր սահմանում է քարացած վիճակը: Իսկ արուեստագետը լաւապէս իր



«Զաջուտ» շարքէն. գործ՝ Սիմոն Աւետիսեան

զանկարչութեան տարբեր շրջանները: 19րդ դարու վերջաւորութեան եւ դարասկիզբին ծնած երէց սերունդի ներկայացուցիչներէն ներկայացուած են Գէորգ Բաչինջաղեանի, Մարտիրոս Սարեանի, Երուստի Գոչարի, Յովհաննէս Զոմբանի, Սեդրակ Ռաշմաջեանի, Վահրամ Գայֆէճեանի, Յարութիւն Կայենցի, Վաղարշակ իլիթէկեանի, Էդուարդ Բաբելեանի, Արա Բեքարեանի եւ այլոց ստեղծագործ



«Երիտասարդ ժամանակի դիմաց», գործ՝ Արամայիս Սիսիթարեան

ծութիւնները: Այնուհետեւ ներկայացուած են երկրորդ սերունդի՝ քանական թուականներուն ծնած հայրենի գեղանկարչութեան շարք մը կարկանդակ զէմբերու ստեղծագործութիւնները, ինչպէս՝ Արտաշէս Բուսնանեան, Լուինիա Բաթրեւէ-Մելիքեան, Յակոբ Յակոբեան, Վարդ Գալարեան, Հենրիկ Սեւաքեան, Մինաս Աւետիսեան, Ռուբէն Ատայեան, Աշոտ Յով-

ստեղծագործական էութեամբ գալիս է նոր առաջարկներ անելու հասարակութեանը, որ միանգամից չի ընդունում ու բարեկամաբար չի ընդունում յաճախ: Եթէ վերջին դարի աշխարհի նկարչութեան պատմութիւնը նայենք, բոլոր նոր խօսք բերող արուեստագետները ենթարկուել են թշնամանքի ու հալածանքի եւ միայն ժամանակի ընթացքում է դա յաղթահարուել, մարդիկ զգացել են, հասկացել են այն, ինչ չէին ընդունում ու սկսել են ընդունել... Այդ իմաստով ես՝ իբրեւ նկարիչ, բարեբախտաբար խանգարող չեմ ունեցել ու ընդդիմութիւն-պետութիւն յարաբերութիւնն աւելի շատ տեսնում եմ պետութիւնն ունենալու մրցակցութեան մէջ: Աւելի շատ տեսնում եմ մարդիկ, որոնք ուզում են իրենք լինել պետութիւնը: Պայքար կայ իշխանութեան վիճակում լինելու համար, որի հետ արուեստագետը բացառականապէս կապ չունի: Արուեստագետը չի կարող այս կամ այն անձին պաշտպանել, որպէսզի նա գայ իշխանութեան՝ դա անխնայ եւ համարում: Այդ դէպքում իր խօսքն արժէք էլ չի ունենայ: Արուեստագետը (յատկապէս գրողներին նկատի ունեմ) իբրեւ զգայուն էակ (աւելի զգայուն՝ քան շրջապատի մարդիկ), կարող է աւելի շուտ տեսնել հասարակութեան թերութիւնը, մոլորութիւնը, շեղումը, եւ բացայայտի ու խօսի: Եթէ նա իսկապէս արուեստագետ է, այսինքն՝ իր կարեւոր վիճակը անկեղծութիւնն է, ճշմարտութիւնն է, այդ դէպքում արուեստագետը կարող է կարեւոր դեր ունենալ: Անշուշտ՝ կարող է այդպիսի արուեստագետի հետ պետական գործիչն ընկերութիւն անել, բարեկամութիւն անել, ու դա աւելի իրեն է գորացնում, քան արուեստագետին:

Հ.- Արուեստագետ-հասարակութիւնը կապը ի՞նչպէս էր տեսնում. արուեստագետը փորձում է կատարելագործել աշխարհը, հասարակութիւնը դիմադրում է (լինելով աւելի պահպանողական ու քարացած մտածողութեան տեղ) ու մերժում... Արուեստագետ-քաղաքացի ի՞նչ են տալիս ու ի՞նչ են կորցնում միմեանց հետ փոխյարաբերութիւններում:

Պ.- Արուեստագետը չի կարող դէմ գնալ իր համոզմունքին, ինքը հաւատում է իր ճշմարտութեանն ու չի կարող նահանջել եւ հակառակ ամէն ինչէ՛ր շարունակուում է պաշտպանել իր տեսակետները՝ հէնց այդտեղ է արուեստագետի արժէքը, այդտեղ է արուեստագետի բերելիք տրուելիքը: Եթէ նա ենթարկուի ճնշումներին ու փոխի իր տեսակետները՝ հաճոյանալով կամ վախենալով, ոչ միայն ինքն է կորցնելու, այլեւ հասարակութիւնն է կորցնելու: Արուեստագետն այն ճամբան է, որ բերում է նոր ճշմարտութիւն՝ շարունակելով նախկին ճշմարտութիւնները: Իր ճշմարտութիւնը եթէ ինքը չի կարող պաշտպանել, ուրեմն չի կարող ստեղծել արուեստի իսկական գործ, եւ յաճախ արուեստագետը կրտուած մարդիկ՝ զիջելով բռնութիւններին ու ճնշումներին կամ վախենալով՝ չեն կարողացել արտայայտել իրենց արուեստը, եւ տուժել է այդ մարդը ու տուժել է հասարակութիւնը:

Հ.- Անցեալ դարի նկարչական անուններ տալիս, ո՞ւմ անունը կը տայիք:

Պ.- Մեր մշակույթը միշտ եղել է: Մեր մշակույթը մէկ հիմնական թերութիւն է ունեցել միշտ՝ ոչ թէ հանճարի պակաս է եղել, այլ եղել է երկրի աղքատութիւնը, թագաւորներն ու պետականութեան պակասութիւնը: Եթէ երոպայական արուեստով հիանում ենք, յիշենք, որ հարուստ ցեղեր են ու կարողացել են նիւթական արվեստի վերածել բարոյականի ու հոգեւորի: Մեր մշակույթն այնքան մեծ է, ինչպէս հին յունականը, կամ իտալականը, եւրոպականը, որովհետեւ մեր երկիրն այնքան հարուստ չի եղել: Ինչ ստեղծել ենք իբրեւ նկարչութիւն, գրականութիւն, երաժշտութիւն, ճարտարապետութիւն, համաշխարհային չի իր կշռով, բայց արժէք է ու այսօր էլ շարունակուում է՝ մենք կարող ենք ասել, որ 20րդ դարին տուել ենք խաչատրեան, Սարեան, Մինաս, Կոմիտաս, Կալենց... Քանակով մեծ թիւ չէ, բայց որակով չափուած ենք աշխարհի հետ: Մենք ունենք մեր որակը, մեր ծիները մէջ կայ, գալիս է ու կարող է շարունակուել: Հայկականութիւնը միշտ անսպասելի է ժայթքում՝ ոչ մէկը չէր սպասում, որ Ջաջուրից Մինաս պիտի դուրս գայ, ոչ մէկը չէր սպասում, որ մասնակցութիւնից հայրենի ժամացող Կոմիտասը պիտի ամենամաքուր, ազնիւ հայ երգը ստեղծի: Ոչ մէկը Մամակոնից Հրանդ չէր սպասում, կամ՝ Կարապետ Չաբենց... Հայ ժողովրդի հանճարը կայ եւ պիտի իրեն դրսեւորի մենք աշխարհի մեծ մշակույթի մասն ենք մեր չափով:

# The Armenian Village

## ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄՈՌՅՈՒԱԾ ՊԱԼԱՏՆԵՐԸ

ԱՐԵՎՄՈՒՏՔԵՒ ԼՐԱԳՐՈՂ ՃԱԼԱԹԸՆ ԲՈՒԵ «ԻՆԹԵՐՆԵՇՆԱԸ ԸՆԴՈՒՍ ԹՐԻՊՊԻՈՒՆ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ ԿԸ ԳՐԸ ԽՐԱՅԵԼԻ ԸԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ ԳՏՆՈՒՂ ԱՐԱՐԱԿԱՆ ԸՆԻ ԿԱՌՅՅՆԵՐՈՒՆ ՄՈՒԹ ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ՄԱՍԻՆ



Քասն ընտանիքին 4 յարկանի պալատը՝ կիսաւեր վիճակի մէջ (կառուցում է 1820ին):

ըզ՝ զարդապատկերներ, որոնք կ'արտացոլեն պալատի մը սեփականատիրոջ ընկերային դիրքը, հետաքրքրութիւններն ու հաւատքը:

Ֆառադի Ազարի բնակարանին մէջ գլխաւոր երեք առաստաղները գծուած են պէյրուսթի արձեւտագէտի մը կողմէ, որ կ'ակնարկէ ընտանիքին հարստութեան՝ պատկերելով գեղուհիներ, որոնք ցորենի հասկեր բռնած են մէկ ձեռքով եւ մանգաղներ՝ միւս ձեռքով:

Պալատները կ'ապառուցեն, թէ նախքան 1948ի պատերազմը, որմէ ետք հիմնուեցաւ Իսրայիլը, Պաղեստին ունէր արաբ քաղաքները բարգաւաճ խաւ մը եւ հողատէր հաւաքականութիւն մը:

Շարիֆ, որ հին կոթողներու պահպանութիւն ուսած է Հոռոմի եւ Վենետիկի մէջ, առանձին կ'արձանագրէ եւ կը պահպանէ պաղեստինեան ժառանգութեան այս անտեսուած մասը: Դժուարին պայքար մը կը մղէ ան Գրաւեայ հողերուն, Նապուսի եւ Բեթղեհէմի հնադարեան քաղաքները իսրայիլեան զինուորական յարձակումներուն ենթակայ են, նոյնպէս՝ անոնց պալատները:

Իմ վարձքս է: Այսուհանդերձ Շարիֆ կը հաւատայ, թէ տակաւին կարելի է պահպանել այս պալատները: «Տասնամեակներ շարունակ իսրայիլացիք անհանգիստ կը զգային նման կառոյցներու ի տես: Այժմ անոնք կ'ուզեն աւելին գիտնալ երկրին մշակութային ժառանգութեան եւ ոչ հրէական անցեալին վերաբերեալ: Տեղացի հրեայ զբօսաշրջիկներ կրնան փրկել այս պալատները», կ'ըսէ ան:

## ՄՇԱԿՆԵՐ ԿԸ ՓՈԱՅՆԵՆ ՀՆԱԳԱՐԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

«Պ. Պ. Ս.» ԿԸ ԳՐԸ, ԹԵ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐԵԼԻ ՎՆԱՍ ԸԱՍՏՈՒՅԱԾ Ե ԸՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՅԵՐՈՒՆ, ԸՆ՝ ԺԱՄԱՆԱԿ



Անգլիոյ ժառանգութեան Հիմնարկին համաձայն, Բրիտանիոյ տարածքին երկրագործական ծանր գործիքներու պատճառով վնասուած են հնագիտական հազարաւոր վայրեր, ինչպէս՝ նոր քարէ դարու գետնափոր երկարաւուն բնակավայրեր, հոռոմէական շքեղ բնակարաններ, անկլոսաբոսի գերեզմանատուներ եւ միջնադարեան դաշտեր ու ոռոգման ցանցեր:

Հիմնարկին նպատակն է ստործել հնագրեան վայրերու պահպանութեան նոր մարտավարութիւն մը: Անոր պատասխանատուները յայտարարած են, թէ մշակները կարելի չէ մեղազրել գործուած աւերին համար:

«Մշակները կը գոհացնեն ընկերութեան պահանջը եւ կը կիրարկեն երկրագործական մարզին կողմէ իրենց փոխանցուած օրէնքները: Հողը հերկելու ծառայող արդի ծանր գործիքները աւելի մեծ վնաս հասցուցած են, քան աւանդական երկրագործութիւնը՝ նախորդ 6 դարերուն», կ'ըսէ Հիմնարկին ներկայացուցիչը:

Նոյնիսկ ամէնէն հին եւ տեսանելի կոթողները աւերուած են կամ ծանր վնասներ կրած են 1945էն ի վեր: Նախապատմական շրջանի բազմաթիւ գերեզմաններ փճացած են: Հոռոմէական գեղեցիկ խճանկար մը շատ գէշ կեղտով վիրուորուած է, երբ հողը խորունկ կորուստ է: Վերջին 30 տարիներուն Նորֆոլքի մէջ յայտնաբերուած պրոնզէ դարու 39 իրերէն միայն 2ը չեն վնասուած երկրագործութեան պատճառով: 4000 տարուան ոսկի դաւաթ մը, որ յայտնաբերուած է Քէնթի շրջանին մէջ եւ վերջերս բերուած է Բրիտանական թանգարան, ձեւափոխուած է արօրի մը ճնշումին տակ:

Անխնայ մշակումի պատճառով ամբողջ բնապատկերներ փոխուած են Պաքիստանի մէջ, ուր միջնադարեան ակօսներ, թուփերու շարքեր եւ դաշտային ծառեր լաւ վիճակի մէջ պահպանուած էին մինչեւ 1950ական տարիները: Հիմնարկը այժմ ձեւափոխուած է «Պատմութիւն հերձակով» վերնագիրով արշաւի մը, Թրուսի նպատակն է բարելաւել անցեալը պահպանելու միջոցները:

Բրիտանիոյ ժառանգութեան նախարարը յայտարարած է. «Հնագիտական վայրերը կը պարտաւորուեն հարուստ նիւթեր, որոնք կը ցանկազբեն այս երկրին քաղաքակրթութեան գարգացման հնագիտականները: Կենսական կարեւորութիւն կը ներկայացնէ այս ժառանգութեան պահպանութիւնը, որպէսզի ապագայ սերունդներ աւելի լաւ հասկնան մեր պատմութիւնը»:

Բրիտանիոյ Մշակներու Ազգային Միութիւնը յայտարարած է, թէ պետութիւնը, տեղական իշխանութիւններն ու հնագէտները պէտք է գործակցեն մշակներուն հետ եւ քննեն պահպանումի ամէնէն արդիւնաւէտ միջոցները՝ մշակելի տարածքներու մէջ հնագիտական վայրեր պահպանելու համար:

Միութեան կենսոյտրի բաժանմունքին ներկայացուցիչը կ'ըսէ. «Հնագիտական վայրերը ընդհանրապէս վնասուած են ոչ թէ դիտումնաւոր կերպով, այլ որովհետեւ մշակներ տեղեկ չեն անոնց գոյութեան»: Պահպանութեան մարտավարութիւն մը յարկաւորու համար անհրաժեշտ է ապահովել մշակներուն զօրակցութիւնը: Անգլիոյ ժառանգութեան Հիմնարկին համաձայն, ազգային արժեք ներկայացնող շուրջ 3000 վայրերու մէջ երկրագործական աշխատանքներ կը կատարուին: Այս վայրերը տարբեր վտանգներու գէժ պաշտպանող օրէնքներ կան, սակայն զանազակ հերկելը արգելուած չէ, թէեւ անիկ կրնայ վնաս պատճառել հնագիտական դիւրաբեկ եւ անփոխարինելի մնացորդներու:

## «ՄՈՍՔՎԱ» ՊԱՆԴՈՒԿԸ ԿԸ ՔԱՆԴՈՒԻ

ԶԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ ԿՈՒԼ ԿՈՒ ՏԱՆ ԽՈՐՀՐԱՅՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԱՅԻՆԻ ԿԸ, ՄԻՋ ՄՈՍԿՈՒՍԻ ԻՃԻՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԱԿԱՏԻՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԿԸ ՓՈՒՍԵՆ ԸԱՂԱՔԻՆ ԸՍՏԱՅԱՈՒՍԿԵՐԸ: «ՏԸ ՆՍԻ ԵՈՐՏ ԹԱՅԱԾ» ԿԸ ՄԱՆՐԱՄԱՍՆԸ:

«Մոսքովա» պանդոկին ճարտարապետական կարեւորութիւնը միշտ կասկածելի եղած է: Անիկ ամէնէն աւելի հռչակ ապահոված է «Միտլինյանա» վոտքայի վաճառանիշին վրայ տպուած իր պատկերով: Սակայն Կարմիր հրապարակին դարպասին կից գտնուող այս տնօժանգուածը քաղաքին եւ անոր խորհրդային անցեալին խորհրդանիշներէն է 70 տարիէ ի վեր: Այժմ անիկ պիտի դառնայ նոր Մոսկուայի մէկ խորհրդանիշը, սակայն շատերուն համար նոյնքան կասկած պիտի յարուցէ:

Պանդոկին սեփականատէրը՝ Մոսկուայի քաղաքապետութիւնը որոշած է քանդել հին շէնքը եւ նոր մը կառուցել անոր տեղը: Շինարարական ծրագիրին մանրամասնութիւնները նոյնքան աղօտ են, որքան այն ղէպքերը, որոնք տեղի կ'ունենային հուն, երբ անոր յաճախողները խորհրդային վերնախաւի ներկայացուցիչներէն կամ «Քա- կէ- Պէ-»-ի կողմէ հետապնդուած օտարներ: Քաղաքապետութիւնը անտեսած է հնութիւններու պահպանութեան նախնադրուող դիր շրջանակներու բողոքները, նոյնիսկ՝ Ռուսիոյ մշակութիւնը նախարարութեան զգուշացումը, թէ պանդոկը քանդելը պիտի նշանակէ քաղաքին սրտին մէջ ոչնչացնել ճարտարապետական եւ պատմական հանրածանօթ կառոյց մը: Անիկ ա նաեւ կ'անտեսէ այն հարցադրումները, թէ պանդոկին քանդումը եւ անոր տեղ 200 միլիոն տոլարէն 400 միլիոն տոլարի համալիրի մը կառուցումը որո՞ւն շահ պիտի ապահովէ. յայտնապէս՝ միայն քաղաքապետութեան:

«Մոսքովա» պանդոկին ճակատագիրը պարզապէս քաղաքին նոր ու անյազնուրդ շինարարական ծրագիրներուն ամէնէն ցայտուն օրինակն է: Ծարտարապետներու եւ պատմագէտներու համաձայն, 1960ական եւ 1970ական տարիներու Պրեժնեկի ժամանակներէն եւ նոյնիսկ Ստալինի օրերէն ի վեր քաղաքին համայնապատկերը ամէնէն մեծ փոփոխութեան կ'ենթարկուի Մոսկուայի մէջ, ուր Ռուսիոյ նոր հարուստները կայք հաստատած են: Հարցը այն է, թէ քաղաքին պատմական հարուստ ժառանգութիւնը ի՞նչ գին կը վճարէ:

«Ականատես կը դառնանք քաղաքին համայնապատկերին քանդումին վերջնական հանգրուանին», կ'ըսէ Ռուսիոյ մշակութիւն նախարարութեան Արուեստներու Ուսումնասիրութեան Պետական հիմնարկին տնօրէնը, որուն համաձայն, առնուազան 100 պատմական շէնքեր քանդուած են յետ-խորհրդային ժամանակներու Մոսկուայի շինարարական ծաղկումին ընթացքին եւ նոյնիսկ իրեն պէս քաղաքին պահպանութեան հսկող պետական ներկայացուցիչներ ոչինչ կրցած են ընել:

Անշուշտ համայնավարութիւնը չէր արտօներ սեփականութիւն ունենալը, հետեւաբար կրնար շինարարական որեւէ ծրագիր ստեղծել: Հա-

մայնավար վարչակարգին անկումէն ետք որոշ փոփոխութիւն մը անխուսափելի էր: «Մոսքովա» պանդոկը, որ փակուեցաւ անցեալ ամիս, դանդաղօրէն կը քանդուի: Անոր ամէնէն թանկարժէք գարդերն ու կարասիները դուրս հանուած են: Այս տարուան վերջաւորութեան պանդոկը անհետացած պիտի ըլլայ: Ոչ շատ հեռու այլ շէնք մը՝ Զինուորական կեդրոնական վաճառատունը, որուն կառուցումը աւարտած էր 1913ին, արդէն քանդուած է մօտակա 18ը դարու բազմաթիւ այլ շէնքերու հետ: Քաղաքապետութիւնը կը ծրագրէ կառուցել «վերանորոգուած» շէնք մը վաճառատուներու եւ գրասենականներու բաժիններով:

Ամէն ոք կը գիտակցի, թէ պատմական շէնքերու սահմանաձգ քանդումի պատճառը դրամն ու ուժն են:

Խորհրդային Միութեան քայքայումէն ետք Մոսկուայի քաղաքապետութիւնը ժառանգեց ուսակական պետութեան անմիջակայ հակալիռնէն դուրս գտնուող կառուածները: Արդիւնքը եղաւ այն, որ Մոսկուայի քաղաքապետ Եուրի Լուժեքով վերահսկէ ոչ միայն քաղաքապետական ծրագիրներու, այլ նաեւ՝ կալուածներու շահաբեր գործառնութեան:

Կարգ մը զնահատումներու համաձայն, Լուժեքովի իշխանութեան հակալիռնի տակ են քաղաքին առեւտրական կալուածներուն կէսը, որոնք այս տարի շուրջ 1.5 միլիարտ տոլար պիտի ապահովեն վաճառքի եւ վարձքի ճամբով:

Քաղաքապետութիւնը նաեւ կ'որոշէ, թէ ո՞ր շէնքերը պէտք է պահպանել իրեն քաղաքին համայնապատկերին անբաժան մէկ մասը եւ ո՞ր շէնքերը քանդել նոր Մոսկուա մը կառուցելու համար: Այս գործընթացը քաղաքին այլ հարցերուն նման զրեթէ մտրոջնութեամբ մուկ է:

Անցեալ տարի քաղաքապետութիւնը յայտարարեց, թէ «Մոսքովա» պանդոկը վերակառուցելու պայմանագրութիւնը 2001ին շնորհած էր ամերիկեան «Տեքորում» ընկերութեան, որ նոյն տարին այլ ընկերութեան մը միացած էր եւ քանի մը անգամ լուծուած էր ու վերահաստատուած: Այժմ անիկ «գործունէութեան ղադրած» հռչակուած է Օրեկոնի նահանգապետութեան կողմէ:

Մոսկուայի մէջ զայն կը ներկայացնէ «Տեքորում» անունով ռուսական ընկերութիւն մը, որուն տնօրէնը կը մերթէ խօսիլ պանդոկը քանդելու եւ նորը կառուցելու ծրագրին մասին: Քաղաքապետութիւնը եւս տրամադիր չէ բացառապէս Մոսկուայի քաղաքապետութեան պատմական շէնքերուն պահպանութեան բաժանմունքին մէջ ներկայացուցիչին համաձայն, «Մոսքովա» պանդոկը այնքան երկար ժամանակ ի վեր անխնամ վիճակի մէջ էր եւ կը սխալմար, որ կ'արանտեսուէր անոր պահպանումը: Փոխարէնը՝ պիտի չէր զայն վերանորոգէ: Փոխարէնը՝ պիտի

Սակայն նոյնիսկ զինուորական գօտիներէ դուրս, Իսրայիլի արաբական հին քաղաքներուն մէջ, պայտաները աւերի վտանգին ենթակայ են արար բնակչութեան չբաւարարուած եւ իսրայիլի իշխանութիւններուն երկարամեայ թշնամութեան պատճառով: Շարիֆի համաձայն, գլխաւոր հարցերէն մէկը իսրայիլեան օրէնք մըն է, որ ապահովութիւն կ'ընձեռէ միայն այն շէնքերուն, որոնք կառուցուած են 1700էն առաջ: Աւելի ուշ շրջանի որեւէ կառոյց կարելի է հիմնովին փոխել, կարկտան ձեւով վերանորոգել կամ քանդել: Ասիկա կը նշանակէ, թէ պալատներուն գոյատեւումը կարեւար է անոնց նոր սեփականատէրերուն բարի կամեցողութեան:

Աւելին՝ արաբական քաղաքներուն հին թաղամասերուն աղքատութիւնը պատճառ դարձած է, որ անոնք կորսնցնեն բնակիչներ ներգրաւելու իրենց հմայքը: «Հարուստ ընտանիքներ դուրս փոխադրուած են եւ իրենց նախկին բնակարանները վարձու տուած են աւելի աղքատ ընտանիքներու», կ'ըսէ Շարիֆ:

Վարձակալներ սովորաբար շատ աժան միջոցներով կը վերանորոգեն այս կալուածները: Դրացիներս իրենց պալատը «արդիականացուցած են»՝ փակելով կամարակապ պատուհանները եւ ցած ինքնելով առաստաղները, որպէսզի աւելի դիւրին տաքցնեն սենեակները:


Շարիֆ կը հաւատայ, թէ լուծումը նման կառոյցներու մէջ բնակող ընտանիքներուն համոզել է, թէ գանոնք պահպանել կրնայ նիւթական շահ ապահովել: «Եթէ զբօսաշրջիկներ դրամ վճարեն պալատներուն առաստաղի որմանկարները տեսնելու համար, ապա ընտանիքները կը սկսին հասկնալ, թէ կ'արժէ հոգ տանիլ անոնց»:

Սակայն պաղեստինեան ինքիֆատան եւ անկէ ետք զբօսաշրջիկներու բացակայութիւնը կը խորտակէ յոյսերը: Ֆառադի Ազարի բնակարանը թանգարան մըն էր ինքիֆատային 6 առաջայժմ անոր սեփականատիրոջ միակ եկամուտը




# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԱՇԽԱՐՀ



### ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

#### ԱՐՄԵՆԱԼ ԿԸ ՄՆԱՅ ԱՆՊԱՐՏԵԼԻ ՄԻԱԿ ԽՈՒՄԲԸ



Թիերի Հանրի

Անգլիոյ ֆուտպոլի պայտաւորութեան 11րդ հանգրուանի մրցումներուն առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը, իրենց արձանագրած յաղթանակներուն շնորհիւ մնացին իրենց դիրքերուն վրայ:

Յարդ անպարտելի միակ խումբը՝ Արսենալ, արձանագրեց եղանակի իր 8րդ յաղթանակը, 4-1 արդիւնքով յաղթական վերադառնալով Լիժի դաշտէն: Լոնտոնեան կապիտան չորս կողերը նշանակեցին՝ Թիերի Հանրի (8րդ եւ 33րդ), Ռոպերտ Բոնոս (17րդ) եւ Ժիլպերթ Սիլվա (50րդ), իսկ Լիժի կողը՝ Էլըն Սմիթ (64րդ):

Արսենալէն միայն մէկ կէտով ետ մնացող եւ երկրորդ դիրքին վրայ գտնուող լոնտոնեան ալ կապիտանը՝ Չելսի, 1-0 արդիւնքով յաղթական վերադառնալով Էլլըրքընի դաշտէն, շնորհիւ՝ ռումանացի Ատրիան Միլիթիուի նշանակած կոլին (49րդ):

Երրորդ դիրքին վրայ գտնուող եւ Արսենալէն երկու կէտով ետ մնացող Մանչեսթըր Եունայթըտ իր դաշտին՝ «Օլտ Թրեֆորտ»-ի մէջ 3-0 արդիւնքով հանգիստ յաղթանակ մը արձանագրեց Փորթլանթի դէմ, շնորհիւ՝ Տիեկո Ֆորլանի (37րդ), Քրիսթիանո Ռոնալտոյի (80րդ) եւ Ռոյ Բեյնի (82րդ) նշանակած կոլերուն:

Լիվըրպոլի դոմար յաղթանակ մը արձանագրեց, երբ 2-1 արդիւնքով յաղթական վերադառնալով Ֆուլիեմի դաշտէն: Եմիլ Կէպի (17րդ) եւ Տեյնի Մըրֆի (89րդ) փենայթիով նշանակեցին Լիվըրպոլի կոլերը, իսկ Լուիս Սահա՝ դաշտին տերերուն կողմը (40րդ):

Ստորեւ՝ 11րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Էլլըրքըն - Չելսի	0-1
Լիժ - Արսենալ	1-4
Մանչեսթըր Եունայթըտ - Փորթլանթ	3-0
Միտլէզպորո - Վուլվզ	2-0
Նիւքասթլ - Ասթօն Վիլա	1-1
Սաութհեմփթըն - Մանչեսթըր Սիթի	0-2
Թոթեմհեմ - Պրիւթթ	0-1
Ֆուլհեմ - Լիվըրպոլ	1-2
Լայպթըր Սիթի - Պլէյքալըն	2-0
<b>ԱՅՈՒՄ</b>	<b>(22:00)</b>
Պրիմհիլլս - Չարլթըն	<b>ԿԵՏ</b>
1. Արսենալ	27
2. Չելսի	26
3. Մանչեսթըր Եունայթըտ	25
4. Պրիմհիլլս	19
5. Մանչեսթըր Սիթի	18
.....	.....
18. Լայպթըր Սիթի	8
19. Պլէյքալըն	8
20. Լիժ	8

### ԹԵՆԻՍ

#### ՀԵՆՄԱՆ ՇԱՀԵՑԱԻ ՓԱՐԻՋԻ «ՄԱՍԹԸՐԶ»-Ի ԲԱԺԱԿԸ

Փարիսի մէջ տեղի ունեցած թենիսի «Մասթըրս» մրցաշարը երեք վերջ գտաւ բրիտանացի Թիմ Հենմանի յաղթանակով, որ արտակապիտանի 6-2, 7-6 եւ 7-6 արդիւնքով պարտութեան մատնեց ռումանացի իր մրցակիցը՝ Անտրէ Բալլը:

29 տարեկան բրիտանացին, որ այս տարուան իր երկրորդ տիտղոսին կը տիրանար, Ուաշինկթընի միջազգայն մրցաշարքը շահելէն ետք, թէ-է շահեցաւ իր ասպարէզին 11րդ տիտղոսը, սակայն ան առաջին անգամ ըլլալով «Մասթըրս»-ի տիտղոսի մը կ'արձանանար:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Հենման շատ հաւանաբար աշխարհի ընդհանուր դասաւորման առաջին քսանին մէջ դիրք մը ապահովէ:

Գ. հանգրուանի մրցումներուն, մարտքի Հիշում Արապի 7-6 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց մրցաշարքի 8րդ դասուած Փարապետ Սիլիանոսը (Թայլէնտ): Անոր կրած այս պարտութիւնը պատճառ դարձաւ, որ մրցաշարքէն բացակայած (վիբալո) արձանագրեց Թաիթ Նալպանտեան «հանգիստ շունչ» մը քաշեց, որովհետեւ այդպիսով ան իրաւունք ստացաւ իր մասնակցութիւնը բերելու Հիւսթընի «Մասթըրս»-ի մրցաշարքին, որուն մասնակցելու իրաւունք կը ստանան առաջին ութ դիրքերը գրաւող մարզիկները:

### ԷՆ. ՊԻ. ԷՅ.

#### ՔՈՊԻ ՊՐԱՅՈՒՆԹ ԹԵՒ ԿԻՐԱՒՈՐ, ՍԱԿԱՅՆ ԴԱՇՏ ՆԵՐԿԱՅԱՑԱՒ ԵՐԿԱՐ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵՆԵ ԵՏԶ

Էն. Պի. Էյ.ի մրցումներուն, շաբաթավերջին տեղի ունեցան 21 ճակատամներ, որոնց ընթացքին արձանագրեցան հետաքրքրական արդիւնքներ:

Լու Սանթիլիո Լէյքըրըի աստղ Քոպի Պրալընթ, որ տակաւին կը մնայ վիրատուր, երէկ առաջին անգամ ըլլալով երկար բացակայութենէ ետք դաշտ ներկայացաւ 37 վայրկեան եւ նշանակեց 15 կէտ:

Անոր խմբակից Շարիլ Օնիլ նշանակեց 24 կէտ եւ 12 ռիպաունտ, մինչ Բարի Մալոն' 18 կէտ եւ 12 ռիպաունտ:

Սիեթլի Սուփըրտանիքս, որ 124-105 արդիւնքով պարտութեան մատնեց Լու Սանթիլիո Քիլիթըրը, իր այդ յաղթանակը գրեթէ կը պարտի Ռէշըրտ Լուիսի, որ նշանակեց իր ասպարէզին ամէնէն աւելի շատ կէտերը՝ 50: Անցեալ եղանակին, ան իր առաւելագոյն կէտերը նշանակեց Ռաշինկըն Ուիլքոքի դէմ՝ 37 կէտ:

Ուաշինկթընի մէջ, Ուիլքոքը 98-85 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրին՝ Նի Ջրոյի նկատմամբ, որուն մարզիկներէն ձեռք բերու Նաշինկընի 30 կէտ եւ 9 էֆիլթ:

Սու Անթոնիոյի մէջ, Սիլբըր 86-74 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Նի Եորթ Նիքսը: Յաղթական կապիտան մարզիկներէն Թիմ Տանքը նշանակեց 15 կէտ եւ 15 ռիպաունտ:


Սթիւքիտի մէջ, դաշտին տերերը՝ Հոքս, յետ երկարաձգման ընթացքին միայն պարտութեան հետեւին Փէյլըրքըն՝ 103-99 արդիւնքով:

Մենֆիս Կրիվիլի 79-70 արդիւնքով յաղթական վերադառնալով հիւրերուն, որ յաջողեցաւ պարտութեան մատնել Ռոքեթթը: Յաղթական կապիտան մարզիկներէն Լորենցըն Ռայթ նշանակեց 21 կէտ, իսկ Ռոքեթթի մարզիկ Եաս Միլի' 19 կէտ եւ 10 ռիպաունտ:

Մինեսոթա Վուլվզ 73-56 արդիւնքով պարտութեան մատնեց Ռոքեթթը: Յաղթական կապիտան մարզիկ Բեյնի Կառնէթ իր կարգուր դերը ունեցաւ այդ յաղթանակին մէջ, նշանակելով՝ 20 կէտ, 7 ռիպաունտ եւ 5 էֆիլթ:

Պոսթըն Սթիլթս 97-90 արդիւնքով պարտութեան մատնեց Նի Օրիինի դաշտէն: Պէյրոն Տէյվիս (Օրիինի) նշանակեց 37 կէտ, մինչ Սթիլթսի մարզիկ Փոլ Փիրս՝ 25 կէտ:

Ֆիլադելֆիա Սիթըր 104-90 արդիւնքով պարտութիւն մը կրեց Կոլորադո Սթիլթս Ուորիորզի դէմ: Սիթըրի մարզիկ Էլըն Սիլբըրը նշանակեց միայն 19 կէտ:



Ռեթի Իվընզ (Ճափին), որ կը շնորհաւորէ Ռէշըրտ Լուիսը

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն արդիւնքները.

**ՇԱԲԱԿ**

Նի Ջրոյի Նէթթ - Մինեսոթա Վուլվզ 84-61  
 Ռ. Ռէֆորթ - Ուաշինկթըն Ուիլքոք 82-79  
 Միլուոքի Պաքս - Ինտիանա Փէյլըրք 93-79  
 Պոսթըն Սթիլթս - Մենֆիս Կրիվիլի 93-91  
 Շիքագո Պոլլ - Արլանտ Կոնք 100-94  
 Տիլթիք Փիլթս - Մայնի Հիթ 93-81  
 Սիեթլ Սուփըրտանիքս - Լ. Ա. Քիլիթրը 124-105  
 Մաքս. Բիլկը - Ֆիլադելֆիա Սիթըր 100-89

**ԿԻՐԱԿԻ**

Լու Սանթիլիո Լէյքըր - Տիեզիքս Սանի 103-99  
 Տիլթիք Փիլթս - Օրլանտո Մէյճիք 96-85  
 Ն. Ջրոյի Նէթթ - Ուաշինկթըն Ուիլքոք 98-85  
 Ինտիանա Փէյլըրք - Արլանտ Կոնք 103-99  
 Մինեսոթա Վուլվզ - Թորոնթո Ռէֆորթ 73-56  
 Նի Օրիինի - Պոսթըն Սթիլթս 97-90  
 Տայաս Մալթրիքս - Եուրո ձեչ 127-102  
 Սու Անթոնիո Սիլբըր - Նի Եորթ Նիքս 86-74  
 Մենֆիս Կրիվիլի - Հիւսթըն Ռոքեթթ 79-70  
 Միլուոքի Պաքս - Շիքագո Պոլլ 99-88  
 Տէնիսի Նալթթ - Սարասոթս Քիլկը 109-88  
 Փորթ. Թրէյլի Պէյլըրք - Քիլկը. Քալիպիլ 104-85  
 Կ. Սթիլթս Ուորիորզ - Ֆիլ. Սիթըր 104-90

#### ՖԱԼՈՒՍԻՅԱԿԱՆ ՄԵՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ...

Շարունակուած Ա. ԷջԷն

Լու, որ ամերիկացիներուն դէմ սպառնալիցի գծով շրջան ըրած «տարածայնութիւնները» ճիշդ էին: Ուրբաթ օր լուրեր շրջան ըրած էին Իրաքի ընդդիմութեան քաջ ստանալու հաւանականութեան մասին: Շաբաթ օր, ամերիկացի բարձրաստիճան պիւտլոնարական մը շեշտած էր, թէ յարձակումները պիտի չսատկանան եւ թէ կայունութիւնն ու ապահովութիւնը Իրաքի գրեթէ բոլոր շրջաններուն վրայ հաստատ է:

#### ԻՐԱՔԵՆ ԿԱՆՈՒՄ ԵՐԱՆՍԱԼՈՒ ԸԱՐՑ ԶԱԿՏ

Շաբաթ օր մինչ ամերիկացի երկու պիւտլոնարներ կը սպաննուէին Իրաքի մէջ, Պոլ յայտարարեց, որ տեղի պիտի չտայ ահաբեկիչներուն դիմաց: Ռատիոկայանէն սփռուած շաբաթական իր պատգամին մէջ, Պոլ ըսաւ, որ Միացեալ Նահանգներ պիտի շարունակեն առաքելութիւնը իրաքի մէջ: Ան շեշտեց, որ Իրաքի կանուխ հեռանալու որոշում մը պիտի քաջալերէ ահաբեկիչները, որպէսզի քաջ տան իրենց գործունէութեան եւ յաւելեալ վտանգ սպառնան Ամերիկայի: «Որոշած ենք մնալ կոտորի ու յաղթել», յայտարարեց Պոլ: Ան ըսաւ նաեւ, որ անցնող քանի մը տասնամեակներուն, ահաբեկիչները սկսած են հաւատալ, որ եթէ ամերիկացիները հարուածեն այլ երկիրներուն մէջ, Ուաշինկթըն տեղի պիտի տայ ու նահանջէ:

Միւս կողմէ, Իրաքի մէջ ամերիկեան քաղաքային իշխանութեան պատասխանատուն Փոլ Պրեմըր յայտարարեց, որ աշխատանք կը տարուի արագացնելու համար իշխանութեան փոխանցումը իրաքցիներուն: Պրեմըր ըսաւ, որ ապահովութեան ուժերուն մարզումը արդէն արագացած է: Ան ակնարկեց, որ իրաքցի ռատիոկայաններուն եւ ապահովութեան ուժերուն թիւը պիտի բարձրանայ եւ թէ մինչեւ յառաջիկայ Սեպտեմբեր աւելի քան երկու հարիւր հազար իրաքցիներ պիտի ստանան իրենց երկիրին ապահովութիւնը:

● **ՌԵՐՔՈՒՔԵՆ** թուրքիս անցնող քարիւղատար խողովակ մը պիտի վերաբացուի այս ամսուան կիսուն, երբ վերաշինութեան աշխատանքը ամառած պէտք է ըլլայ, յայտնեցին քարիւղի մարզի իրաքցի պաշտօնատարները:

### ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

#### ՄԱՐՍԵՅ ՆԱՅԱՆՁԵՑ 3ՐԴ ԴԻՐԸ



Մորիենթէս (կերպար) Գալպըն Լիոնի առաջին կողմը նշանակեց

Ֆրանսայի ֆուտպոլի պայտաւորութեան 12րդ հանգրուանի մրցումներուն, ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը գրաւող Մոնաքոն անհրաժեշտ արձագանք իր դիրքը, երբ իր դաշտին վրայ 4-2 արդիւնքով պարտութեան մատնեց վերջին դիրքը գրաւող Լը Մանը, որ միակ խումբն ըլլալով ցարդ յաղթանակ չէ կրցած արձանագրել: Իշխանապետական կապիտան կոլերը նշանակեցին Ֆերնանտո Մորիենթէս (6րդ), Տանիէլ Բուսէն (22րդ) պալմամբ իր բերդէն ներս, Սեպաթիան Սքիլարի (68րդ) եւ Թապանկ Մուլթէ (84րդ) սխալմամբ իր բերդէն ներս, իսկ Լը Ման կոլերը՝ Տանիէլ Բուսէն (9րդ) եւ Լորան Փէյլթայտ (11րդ):

Մարսէյ 1-0 արդիւնքով պարտութեան հետեւալէ ետք Պորտուի դաշտէն, 2րդ դիրքէն նահանջեց 3րդ դիրք, իր տեղը կիցելով Լիոնի, որ իր ունեցած կոլերէն շնորհիւ գերազանցեց Մարսէյը: Պորտուի կողմը նշանակեց Ժան - Քլոտ Մարչըլիլ (45րդ): Անցեալ շաբաթ Պորտուի մարզիչի պաշտօնը ստանանաւ Միշէլ Փաուսն արձանագրեց իր առաջին յաղթանակը:

Լիոն իր դաշտին վրայ 5-0 արդիւնքով պարտութեան մատնեց Նիսը, շնորհիւ պրպիլցի Ժոնիիւիլի (25րդ եւ 73րդ), Ֆլորիան Մալուտալի (27րդ), Ճիովանի Էլպէրի (39րդ) եւ Սիսիլի Կովոլի (45րդ) նշանակած կոլերուն:

Ստորեւ՝ 12րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Լիոն - Նիս	5-0
Պարսիա - Մաքսիս	1-1
Պորտու - Մարսէյ	1-0
Լիլ - Կենկան	1-3
Մէս - Մոն	0-1
Մոնպո - Լը Ման	4-2
Մոնթելիէ - Նանթ	4-1
Ռենն - Սթրասպուր	1-1
Թուլուզ - Օքսէր	0-3
Փարիզ Սէն Տերմէն - Լանս	0-1
<b>ԳԱՍԱԿՐՈՒՄ</b>	<b>ԿԵՏ</b>
1. Մոնպո	27
2. Լիոն	24
3. Մարսէյ	24
4. Փարիզ Սէն Տերմէն	20
5. Նանթ	19
.....	.....
18. Կենկան	11
19. Թուլուզ	9
20. Լը Ման	4

#### «ԴՈՒՔ ԵՔ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ»...

Շարունակուած 3րդ էջԷն

գործով, իր ծառայութեամբ, իր յանձնառութեամբ ու գիտակից մտնեցումով»:

Ազգային կեանքին մէջ մեր երիտասարդութեան բացակայութիւնը երկու երեսներով անընդունելի նկատեց վեհափառ հայրապետը. «Մեր երիտասարդները պէտք է մտնեն մեր կարողութեան պէտքէ գրկարաց ընդունին մեր երիտասարդները: Դո՛ւք է, որ փոփոխութիւն, վերանորոգում պիտի յառաջանէ մեր երկրին մէջ, յաւակալէս համաշխարհայնացումի այս դարուն: Համաշխարհայնացումը բառ չէ: Անկա մեր կեանքի բոլոր տարածքներէն ներս ներկայութիւն է ու նոր մարտահրաւիրներ կը ստեղծէ մեզի համար: Մեր կարողութեան պէտք ունին վերանորոգման, բարեփոխութեան, եւ այդ բոլորը ընդդէմ այսօրուան մտահոգութիւններով տագնապող համայնարանական է, որմէ կը սպասուի յանձնառու ըլլալ նման ծառայութեան», ըսաւ ան:

Ի վերջոյ, լիբանանահայ համայնքի կեանքին մէջ համայնքում պարզելու ու ներդրում կողմէ իրաւէր ուղղելով, վեհափառ հայրապետը կը ուղղեց ներկայութիւն դառնալ ամէն տեղ յիբրեւսական մակարդակի վրայ, եւ այդպիսով տեղ կանգնի մեր իրաւունքներուն: Վեհափառ ուրախութիւն յայտնեց Անթիլիաս համայնքում այս մարտունակ, բնակիչ. «Պէտք է օգտագործենք մեր մարտունակ, սակայն փոխադարձաբար՝ մարտունակ ի՛նքն օգտագործելի պէտք է դարձնել ինքզինքը: Մակայն չի մոռնանք, որ աշխարհը որակ կը փնտռէ ու յանձնառութիւն կը սպասէ: Դո՛ւք էք մեր համայնքին աղբ, որմէ կը սպասուի յանձնառու ըլլալ նման ծառայութեան աղբիւրը», եզրափակեց վեհափառը:

Գեղարունեստական ամփոփ յայտագիր ներկայացուցին թամար Իսկէնեան (շուի) եւ Տաթևիկ Արթինեան (դաշնակ), ինչպէս նաեւ Վահրամ Էմիհեան (դաշնակ):

